

ԿՐԾԱՆՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՆԻ ԼԵԶՎԻ ԱՌԱՆՁՆԱԼԱՏՅՈՒԹՅԱՆ
ՄԻ ՔԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ

Ս. Ս. ԿԱՍՊԱՆՅԱՆ

77

Կոստան Զարյանն ազգային և համազգային պոեզիայի սկիզբներից սելված մեծատաղանդ բանաստեղծ է, շնորհաշատ արձակագիր, բազում էս-սենների ու ճանապարհորդական նոթերի, ակնարկների, հետազոտությունների հեղինակ, կրթոտ հրապարակախոս, գիտության գործիչ։ Նրա գրական ժողովրդագրությունը հալ մշակույթի անկապտելի թաղաթուղթներն է։

Ճակատաբերի բերումով, պատանեկության ամենավաղ տարիներից սկսած, լի էլիով արտասահմանյան մի շարք երկրներում՝ նա մայրենի լեզ-վի պես տիրապետում է ռուսերենին, անգլերենին, ֆրանսերենին, իտալերե-նին, ֆլամանգերենին։ Զարմանալի փաստ է, որ նա իր առաջին գործերը գրել է ոչ թե հայերեն, այլ իր հմայած լեզուներով, մասնավորապես՝ ֆր-րանսերեն։ Հայերեն սովորել է 25 տարեկան հասակում։ Նրան մեծ հոգս է բերում ֆրանսերեն գրված, ապա իտալերեն թարգմանված «Եռեր Լորդո» աւելու համար վիշտը երկրի և վեշտը երկինքների» պոեմը, որի մի մասը ապագովել է Միլանում՝ 1914 թ. «Երրեկ» ամսագրում՝ «Ալյսարհի հրաշա-րակախության զուգործություն» մասնաշարով։ Շատ շուտով այն լույս է տեսնում առանձին գրքով և թարգմանվում ու հրատարակվում մի շարք լեզուներով։ 1922 թ. Պոլսում լույս է տեսնում Կոստան Զարյանի «Որերի պատեր» բանաստեղծությունների ժողովածուն, 1930 թ. Բոստոնում՝ «Տառ-րագում» հարսի պոեմը, 1943 թ. Բոստոնում՝ «Նավը լիտան վրա» վեպը։ Սուրբ բաղնիքս վերահրատարակվում են սփյուռքում, թարգմանվում հվ-րուպական շատ լեզուներով։

Նույն մի շարք դյուցազներգություններ, պոեմներ, բանաստեղծություն-ներ, սասմվածքներ ու վեպեր լույս տեսան Եսմա՝ սփյուռքահայ մշա-կութային կենտրոնների ջանքերով, բոլորը՝ առաստաղմանում։ Դրանցից են՝ «Երեկ» (Լիբանան, 1975), «Գլուր գյուցազներգություն» (Եսմա, 1978) ժողովածուները։ Այս գյուցազներգություններից հայերենից առ ալյուսը հրատարակվել են միայն երկուսը՝ «Արա աստվածը» և «Վահագն»։ Տպա-դրվել են նախ «Տառարագում» հարսի ժողովածուում, ապա՝ դրույի ծննդյան հարբութամյս կի առթիվ հրատարակված «Երկերի» մեկհատորյակում (Ե., 1985)։

Թեև կյանքի մեծ մասը Կ. Զարյանն անց է կացրել հայտնի Կլերերից հեռու, բայց դարմաճառներն մինչև վերջ հարազատ է մնացել բնաշխարհի մատնոբությանը, արեելյան հայերենի ազգային ոգուն։ Իր երկար ու բեղմ-նավոր ստեղծագործական ճանապարհի դեմքի թույլը շոջաններում նա եր-բեր չեամբսց սեր ու հակում է ունեցել ժողովրդական բառ ու բանի, կեն-դանի լեզվի և մատնոբության համն ու բույրը իրենց մեջ խաալրած ձևերի ու կապակցությունների նկատմամբ, ինչը չէր կարող իր որոշակի հարրը թողնել նրա գրական ժողովրդագրության վրա։ Ինչպես ինքն է ասում, «յեղուն արյունի մեջ է, ինչպես տաղանդը, ինչպես հիվանդությունը, ինչպես ճա-շակը»¹։

¹ Տե՛ս Կոստան Զարյան, Տեղի, ժամանակի և դրույի մասին (Սովետական գրակա-նութւն, Ե., 1970, № 6, էջ 105)։

Հենց այդ արյան կանչով է նա մշտապես դմում աղբալին ակունքներին: «Վեղվին կենդանություն տալու համար,—ընդգծում է նա,—պետք է վերադառնալ հողին, սեփական հողին: Լեզուն իր հյութը առնում է հողից, ինչպես ծառը»²: Այդ հողը աղբալին մտածողությունն է:

Բաղմաշերտ, բաղմատարը է Հառյանի ստեղծագործությունների լեզուն, բառապաշարը: Դրոզի չափածոյի լեզվի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրա բառապաշարի մի շրջափելի շերտն են կազմում ժողովրդական ակունքներից քաղված բառերն ու ձևերը, դուգորդումներն ու կապակցությունները, դարձվածալին ու թնավոր արտահայտությունները:

Իրենց ծաղմամբ վերածական բարդությունները, կապված լինելով ժողովրդական լանավոր ստեղծագործության ու բանահյուսության հետ, կենդանի խոսքից աստիճանաբար թափանցում են գեղարվեստական գրականության, մասնավորապես չափածոյի մեջ, իբրև մտածողության յուրահատուկ արտահայտություններ, դրանք «ծառայում են պատկերների ստեղծմանը, հեղինակային խոսքին կենդանություն և հուլականություն հաղորդելուն, դրական հերոսների ու կերպարների լեզվական անհատականացմանը և դրական-ուժական այլ բաղմամբի նպատակներին»³:

Կոստան Հառյանի չափածո խոսքում առատորեն սփռված են վերլուծական բաղադրությունների բոլոր տարատեսակները, այդ թվում՝ հարադրությունները՝ լրենց երկու տարածված տեսակներով՝ անվանական, բաղական և կոկնավոր բաղադրություններ:

1. Անվանական հարադրություններ (ինչպես և բաղական) բարդության ամենահին ու նախնական տեսակն են: Սրանք այն բաղադրություններն են, որոնց մեջ երկու, հաղվադակ՝ ավելի բառեր «միասին առնված, բայց առանց սխառնվելու, արտահայտում են մեկ բառի իմաստ, բայց որում, բաղադրիչ կիսանկախ բառերը մեծ մասամբ համարյա լրիվ կերպով պահպանում են իրենց լիմաստը, հաճախ սակայն իսպառ զրկվում են նրանցից»⁴:

Ի տարբերություն բաղական հարադրությունների, որոնցում, չհաշված դուգորդական բաղադրությունները (մեմենկ-լուծենկ, գալ-հասնել և այլն), բաղադրիչների միջև օրինաչափորեն առկա է ստորադասական շարահյուսական հարաբերություն (նեռն գալ, Կուս գալ, զլուս տալ, զլուս տանել, երես տալ, երես առնել, խելի գալ, ալուս քափել և այլն), անվանական հարադրությունների կազմիչների միջև գոյություն ունի միայն համադասական հարաբերություն: Այս կարգի հարադրությունների կազմիչների միջև կարող են լինել իմաստային երեք հարաբերություններ՝ նույնական, առնչակցական, փոխակցական: Վերջինից են այն անվանական հարադրությունները, որոնց բաղադրիչները նույն իմաստն ունեն կամ իմաստով մոտ են, ինչպես՝ ամուլ-մեղուլ, գոռուլ-գառուլ, ջիկոզ-թիկոզ: Առնչակցական են այն անվանական հարադրությունները, որոնց բաղադրիչները իմաստով առնչակից բառեր են, ինչպես՝ կեռած-լսած, լուս-ձմեռ, քակ ու մանակ: Հավասարակցական կապակցության մեջ հարադրվորների բաղադրիչները հակադիր իմաստներ ունեն, ինչպես՝ ամուլ-ձմեռ, զիջեց-լեռեկ, ավել-պակաս»⁵:

Հարադրական բարդությունների մեծ մասը վերացարկված կերպով, էությունով ավելի իմաստ է արտահայտում, քան դրանց կազմիչների սոսկական իմաստական գումարը, այլ կերպ ասած՝ դրանք ստացել են փոխաբերական կամ այլաբերական նշանակություններ՝ հաճախ վերածվելով դարձվածալին միավորների: Սա մի հանգամանք է, որ նույնպես զգալի չափով

² Նույն տեղում, էջ 103:

³ Ա. Հ. Պապույան, Պարոյր Սեակի չափածոյի լեզվական տրվեստը. Կ., 1970, էջ 48:

⁴ Պ. Բ. Գևորգյան, Ժամանակակից հայոց լեզվի գասրնբաղ, Կ., 1955, էջ 161:

⁵ Պ. Բ. Պապույան, Խոսքի մշակութի և ստեղծագործական հիմունքներ, հ. Ա, Կ., 1990, էջ 213—214:

պայմանավորում է այդ տեսակի բաղադրությունների խիստ աղղային, բնաշխարհիկ բնույթը:

Ինչ վերաբերում է Կոստան Ջարյանին, հարկ է նշել, որ նրա շարժումը հանդիպում ենք անվանական հարադրությունների ամենաայապահ աբսուրդայությունների՝ բաղադրիչների լծաստացին տարրեր հարաբերություններով և իրագործության տարրեր պատկանելությամբ:

Քննենք մի քանի նմուշ: Ահա իմաստային կառուցվածքով համահայտն հարաբերության մեջ գտնվող մի քանի օրինակներ. տեղ-տիրակա՞ն, «Մհերը դարձավ առոտների տեղ-տիրակա՞ն» (ԳԴ, 95), բուր-բուրա՞ն, «...Որ բուր-բուրանը ծեծում է մթնած երկնքի կալը» (ն. ա., 14), «Ամալի լեռանց կույր Հոմերոսը թափված աչքերը հառել է երկինք և բուր-բուրանի շղար ահավոր դարձում է դորեղ իր հեկղամուրի երկաթի երգին» (ՏՀ, 27), այգ ու պար-տեղ, «Եվ ինչ երկիր է... փարթամ, զովաշունչ, լիցված յուսավոր այգ ու պարտեղով՝ Եվ ձյունադադաթ հսկա լեռներով» (ն. ա., 80), մոգ և ֆուրմ, «Եվ ճաճփա ընկավ մոգ և ֆուրմերի Եվ դեպանների մի մեծ շքանումը» (ն. ա., 81), զարյ ու մետախ, «Ջարյ ու մետախով ծածկված ուղտերի Շարանը անցավ անապատները» (ն. ա.):

Դժվար չէ նկատել, որ ընդգծված միավորները բառերի՝ միմյանց սերտաճած կապակցություններ են՝ մեկ լիզհանուր բառային լծաստով: Բառաբերականական այս յուրահատկության շնորհիվ նման հարադրավոր կապ-մությունները մոծվում են բառարանների մեջ⁶:

Ըստ բաղադրիչների կապակցության իդանակի անվանական հարադրությունները ստորաբաժանվում են երկու աստիճանակի՝ շղկապական և հարակցական: Շղկապական անվանական հարադրությունների կրքերը կապակցվում են առավելապես ուժ հազվադեպ և շղկապով (զարյ ու մետախ, մոգ և ֆուրմ): Հարակցական բաղադրության կազմիչները կապակցվում են պարզապես հարակցվելով միմյանց, որը դրության մեջ արտահայտվում է դժիկով (բուր-բուրա՞ն):

Կոստան Ջարյանի շարժումում անվանական հարադրությունների իմաստային նշված խմբերով, սակայն, ավելի հաճախ ենք հանդիպում առնչակցական կապակցությամբ միավորված ձևերի: Այսպես՝ վահան-նիզակ, «Բշնամու նետած վահան-նիզակով դիմված շարքերը, բրդի արոտված ծառերի նման, Աջ ու ձախ ընկան» (ՏՀ, 95), ծառ ու բույս, «Եվ իր դողը տանում-նետում ծառ ու բույսին» (ԳԴ, 98), գետ ու ձուռ, «Մայրը բնության բայլեց հողերի, Գետ ու ձուռերի (....) Կյանքեր պարզևող Ջեմուլյան միջից» (ն. ա., 29), շաղ ու շող, «...Ծրբ բո վարսերից բաղկի՞ն հուլինձի շաղ ու շողերով» (ն. ա., 23), ցուլ և այծ, «Անտառներում նրանք բռնեցին եղնիկների, վարազների, ոչխարների, ցուլ և այծի» (ն. ա., 111), զեն ու զարդ, «Ձեն ու զարդերով, սրերով փողփող և կորգակներով թող առաջանան ասպետները ժիր Կարոս Մեծի» (ՏՀ, 32), հուռուր-ուլու՞նք, «Հրկիզաբոց արցունք, հուռուր-ուլունք, առավոտ, աղոտ աղոթք...» (ՕՊ, 35), երմայլ-տեղանք, «Ասես սիրտը պիտի ճաթի՝ մաշված, այրված հմայլ-տեղանքի՝ ելեղող հեկեկանքով ու ցավերով» (ն. ա., 108) և այլն:

Այս խմբի վերլուծական կազմությամբ բաղադրությունների մասին հարկ ենք համարում նշել նաև հետևյալը: Ու, մանավանդ և շղկապակցությամբ կառուցների բաղադրիչները կարող են ընկալվել որպես նախադա-

⁶ Տե՛ս է. Գ. Աղաջան, Արդի լեզուների բացատրական բառարան, Ե., 1976, համապատասխան գլխադասերը, Ա. 2. Պապոյան, Պարույր Սեակի շարժումի բառարան, Ե. 1, Ե., 1981, հ. 2. 1982, նշանով ուղղված գլխադասերը:

⁷ Է. Գ. Աղաջանը ընդունում է նաև երրորդ տարատեսակը, որ կոչվում է կապակցական, «որոնք ներկա աշխարհում են շարժյունական բառակապակցություն՝ բաղադրիչների համապատասխան բառականակա՞ն ձևավորումով, ինչպես՝ ոտից-պոլս, տակից-պոլից (չուռն տալ)....» (տե՛ս է. Գ. Աղաջան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984, էջ 228):

ստիժան րաղմակի, համադոր անդամներ: Այդ պարագայում հասկացության ծավալման և բարդության մասին խոսք չի կարող լինել: Որպես բաղմակի ու հասարակ միավորներ՝ կարող են բարձրվել մասնավորապես այն պարագայում, երբ կից բաղադրիչները ունենում են քերականական (կառնողորի) և ունեն հատկություններ: Օրինակ՝ Լեո ու անտառ, արտ ու պարտեզ ծածկվեցին մշուշով: Ապա նաև՝ Լեոն ու անտառի, արտի ու պարտեզի մշուշը ցրվեց: Հասկանալի է, որ երկու կիրառություններում էլ լեո ու արտ, արտ ու պարտեզ և լեոն ու անտառի, արտի ու պարտեզի բառական միավորները համապատասխանաբար առանձին-առանձին ենթակա են (առաջին օրինակում) և հատկացուցիչներ (երկրորդ օրինակում): Այսինքն՝ ղեկուս չկա պերտեզի: Բարդություն՝ հարադրություն: Բայց այս է պարտեզի բարդությունը օրինակում:

«...արթնանում էին

Լեո ու անտառի, արտ ու պարտեզի
Մեծ ողիները» (Տ2, 89):

Կասկածից վեր է, որ ընդգծված կապակցությունների առաջին եզրերի քերականական սպասելի իմաստների կորուստը ու շահկապով ազդեցված բաղադրիչները միավորել է մեկ սահմանափակ մեջ, որի բառաքերականական իմաստը, ավելի ղեկավարում հասկացուցիչ նշանակությունը, դոստոյևս է երկրորդ տարրի միջոցով (լեո ու անտառի, արտ ու պարտեզի):

Ընդունելով նկատված, որ «առնչակից առարկաներ, երևույթներ, հատկանիշներ ցույց տվող անուններից... կազմված հարադրություններն առանձին-հատուկ են միասնության, սահմանափակության, հավաքականության խմբում (համա. սար ու ձուր, ղեկ ու զազան)»⁸:

Սակայն բանի որ հարադրության բաղադրիչների տարրերը իրենց այդ իմաստային միասնության հետ մեկտեղ դեռևս ինչ-որ շահով պահում են անկախ բառային շեշտերը (թեև վերջինս ավելի դուրեղ է առաջինից), այդ իսկ պատճառով՝ ռեզհանրացնող-վերադրված նշանակության հետ միաժամանակ ինչ-որ շահով ղեկավարում է նրանց նախկին իմաստը. հենց դրանով էլ պայմանավորված է դուրեղների ու երևույթների առատությունը հարադրությունում: Ասվածին ավելացնենք, որ հարադրվող կազմությունները հենց դրանով են ստանում ոճական որոշակի արժեք, ինչով էլ հաճախ սլայմանավորվում է բնագրի ազդային երանգը, բնաշխարհիկ հենքը:

2. Բայական հարադրությունները առանձնապես հատուկ են հայոց լեզվին և կազմում են նրա ազգային հիմքի շատ կարևոր ու ինքնատիպ դուրսերը: Հարկ է նշել, որ Զարյանի շահածոյում բայական հարադրությունները առանձնապես պակաս են հաճախված, քան անվանական: Հանդիմանում են բայական հարադրվող կազմությունների բոլոր տարատեսակները: Քանակական առումով ևս բայական վերլուծական բաղադրությունները հեռավայրում են մեր բառարանի մի զգալի շերտը: Քննենք մի քանի բառական միավոր, որոնք ունեն իրենց համապատասխան համադրական կազմությունները: Այսպես՝ հայերենում կան եռալ-եռ գալ, հրամայել-հրաման տալ (արձակել), կատարել-կատակ անել, թավալվել-թավալ գալ (տալ), ուժեղանալ-ուժեղանալ, վերել-վերել ստանալ, ուժեղանալ, լսել-լսվել, լսել-լսվել, լսել-լսվել և նման բաղադրվող դուրահեռ ձևեր, որոնց երկրորդ եզրերը, համապատասխան համադրական ձևերի, ոչ միայն օժտված են հուզականությամբ ու ազդային հենքով, այլև հաճախ հանդես են բերում իմաստային տարբերություններ: Երբեմն, թվում է, պարզապես անհնար է հարկ եղած միտքը, տեսլիքը, արտահայտել համադրական կազմությամբ:

⁸ Նույն տեղում, էջ 228:

⁹ Ա. Է. Պարսկյան, նշվ. աշխ., էջ 58:

«...Հովանի կանգնած իր շեմի առջև, վաղրի աշքերով
Կիտեց լեռները և վնիս սոսնձ ներս մտավ խրճիթ» (ՏՀ, 23):

Այլ կերպ պետի տանը՝ «վնոսած ներս մտավ խրճիթ» (վճռել է դատնալ
ույզով, դեռ սարերը թշնամուն հալածելու): Բայց մի՞թե վնոսած ձեր կա-
րող և արտահայտելի ոճական այն բոլոր նորերանգները, որ ունի վնիս ա-
րած հարադրավոր կազմությունը:

«...Ականջ զնուսմ ձորերի մոտ ոռնող ձայնին և սպասում» (ն. տ., 35):

Իսկապես, մի՞թե ականջել, նաև նույն իմաստը ունեցող լսել, ունկրել-
ուել, համադրական կազմությամբ բայերը կարող էին դրսևորել այն բոլոր
իմաստային երանգները, հուզական բնկումները, որ պահանջում է ականջ
զնիվ կարսուրյութնը: Կամ՝ որպես հարուստ գունային երանգներ է ի հայտ
բերում հեղինակը պատել համադրական ձևի փոխարեն գործածելով պատշա-
տելի-ր:

«...Աշունն էլ դինով՝
նկտվում է դիզված ցորենի վրայից,
Յատկում դաշտեղաշտ և պտույտ ածում լուռնո ջաղացը»
(ն. տ., 19):

Պատկերն արդեն իսկ համեմատված է դիցարանական նկարագրով, որի
հինքի վրա «պտույտ ածում լուռնո ջաղացը» արտահայտությունը ստացել
է ընդգծված հուզական լիցքավորում:

Եվս մի քանի քննադրային օրինակներ. եռ զայ. «Գետը եռ եկավ, խշշաց,
կարկաշեց» (ԳԿ, 39), ձայն արձակել, հրաման տալ, «Հայ նոր արքան փառ-
քով նստեց գահի վրա իր հայրենի (...), Ձայն արձակեց, հրաման տվավ
Հյուսիս-հարավ...» (ն. տ., 183), Օղակ կապել, «Վաշտը օձի պես սողում է
դանդաղ, հետո նետվում է ժայռերի հետև, ցրվում, ետ վազում, Ու հա-
մառ շարքով բարերի զխին օղակ է կապում, մագլցում վերև» (ՏՀ, 32),
ուծ առնել, թշնամուն հալածող ջոկատը անցնում է յոթ սարի հետև և «նու-
գարկելով երկնքի ճամփում դժգոյն մի աստղի ուղեկորույս լույսը՝ Լուսա-
բացի հետ զլորվում է հովիտ, Գրկում արևի կարմիր փունջերը և նոր ում
ստած՝ Ուսերի վրա ստած բրտինքը թափահարելով՝ Հսկա Կուռտիկի կողմ
է մագլցում» (ն. տ., 30):

Ե. Զարյանը մշտապես կապված է մնում հարազատ ժողովրդի ազգային
մտածողության իմաստուն ձևերին: Իրավ, մի՞թե օղակել և ուծեղանալ հա-
մադրական բայերը կարող էին գեթ հեռավոր կերպով վերարտադրել այն
իմաստային նրբերանգները, որ ունեն օղակ կապել և ուծ առնել վերլուծա-
կան ձևերը: Օղակել բայը իր իմաստային կառուցվածքով օղակ կապել-ից
տարբերվում է նաև մեկ այլ կարևոր հատկությամբ՝ խնդրառության մեջ
ներգործական սևուռ է և պահանջում է ուղիղ խնդիր (օղակել մի բան, օղակի
մեջ առնել մի բան), այնինչ օղակ կապել-ը շեղոք սեռի է և նշանակում է.
օղակի՝ շրջանի տեղի, նաև ստանալ, բնդովել, օղակածն դառնալ: Հենց այս
իմաստով էլ գործածել է հեղինակը. «Ու համառ շարքով բարերի զխին
օղակ է կապում, մագլցում վերև»:

Այսպես իր քննադրում անփոխարինելի է նաև ուծ առնել-ը, որ ուծեղա-
նալ կամ ուծովանալ իմաստներից առավել նշանակում է նոր թափ առնել,
նոր ուծ ստանալ և այլն:

Կոստան Զարյանը ոչ քիչ դեպքերում վերլուծական բաղադրության հա-
րադիր եզր է դարձնում հիմնական ձևերին կամ արմատներ, որոնք ինք-
նուրույն կիրառություն կամ առհասարակ շունեն, կամ հազվադեպ են ինք-
նուրույն բարբ հանդես գալիս: Այդպիսիք են՝ թավալ, ման, տատան, ցունց
արմատները: Սրանք գործածվում են միայն բաղադրությունների մեջ, ինչ-

տես յաւիտիկ (յաւիտիկ), կլիկ, տատանել (տատանել), զննել (զննել):
Իրողի շարժումն սրանք դարձել են հարադրավոր կադմոթյունների
տարր: Այսպէս՝

Սուրող քամու մետաղ փողը դրնդում էր,
Բաւալ զալիս բլրան կողին
Եվ իր զողը տանում նկտում ծառ ու բույսին (ԳԻ, 98):
Սանան, հմարված, անտառէ մեջ ման է զալիս՝
Հաղիվ ոտքը դետին տալով (ՏՀ, 40):
Սանան սիրտը ման է ածում
Խոր լռության խոպան դաշտում (Ն. տ., 35):
Վաճառն թուր կով տվեց, լռեց (Ն. տ., 24):
Խոր դաշտերում, հակինթ կտրած, մեծ հասկերը
Մկանցին հասնել
Եվ խոնարհած իրենց դուխր տառան ածել (Ն. տ., 117):
Ստառն ամբողջ խորշափելով տառան եկավ (Ն. տ., 122):
Յորենը ձգվեց, ցունց եկավ, շարժվեց... (Ն. տ., 144):

Իրենք էս մի քանի բնագրային օրինակներ՝ տարբեր կառուցվածքներով: Ընդ զալ, «Առադասաները և իր կայմերը ընդ էին զալիս ամպեռ, ծալ-
րին» (ԳԻ, 43), ոլոր ածել, «Սյունյաց աշխարհի մի խումբ կովոյնն ոլոր
ածեցին իրենց բեղերը» (Ն. տ., 15), ոլոր զալ, «Եվ մեղմաքայլ ոստումնե-
րով, Աջ ինտվելով, ձախ դառնալով, Աստղերի հետ ոլոր գալով՝ Շուրջպար
էին պարում մի բարդ» (Ն. տ., 98), ոլոր տալ, «Բայց երկու քայլ շատու-
ցած՝ վրա ընկավ Վահագնը քաջ, Իր բողավառ, պինդ ձեռքերով վիզը ակ-
մեց, ոլոր տվավ» (ՏՀ, 122), զրոն տալ, «Երբ Վահագնը այդ նկատեց, սմ-
րողը ուժով զրոն տվավ» (Ն. տ.) և այլն:

Ինչպէս հայտնի է, հարադրավոր բայերի զգալի մասը վերահմաստա-
վորվելով և ստանալով մի նոր, ընդհանուր նշանակություն, վերածվել է
դարձվածային միավորների¹⁰: Հետադոտողը իրավացիորեն նկատում է, որ
«Իարձվածներ լինելով հանդերձ, այդպիսիք միաժամանակ դիտվում են իր-
րե բառական որոշակի միավորներ և մեկ ընդհանուր հասկացություն ար-
տահայտելու և բաղադրիչների պատմականորեն առաջացած ձույլ միասնու-
թյան հիմունքով խոսքի մասերի համակարգում դասվում են բայական բա-
ռախմբի մեջ»¹¹:

Կ. Զարայնը սիրով է կիրառում նաև դարձվածային արժեք ունեցող հա-
րադրություններ, որոնք մի յուրահատուկ հարադատություն են հաղորդում
նրա խոսքին, դարձնում կենդանի ու թրթռուն:

Դարձվածային իմաստ ունեցող որոշ հարադրավոր բայեր հաճախ պա-
հում են մեկից ավելի նշանակություններ, որոնք որոշակի արժեք են ստա-
նում համապատասխան բեղադրերում: Այսպէս, Բար կտրել հարադրավոր
բայը ունի մի քանի իմաստներ, բոլորը՝ դարձվածային. 1. Բարհանից հա-
նել՝ Բար՝ շիջաւետության և ուրիշ նպատակներով, 2. պնդաւալ, Բարի նման
պինդ՝ կարծի դառնալ (ստոյելով, շտապելով և այլն), 3. Բարաւալ, անշար-
ժանալ, Բարի նման անշարժ դառնալ, 4. Բարսիւտ դառնալ, գութը՝ խիւճը
կորցնել, 5. անսպասելի մի հարվածից՝ լուրից և այլն ապուշ կտրել, ապշա-
հար մնալ և այլն¹²:

¹⁰ Այս մասին տե՛ս Մ ան ու կ Արեղյան, Հայոց լեզվի տեսություն, Ե., 1965, էջ
173 և հշ:

¹¹ Ա. Հ. Պապոյան, Նվ. աշխ., էջ 61:

¹² Տե՛ս է. Կ. Արայան, Արդի հայերենի բացատրական բառարան, էջ 1557:

Ահա մի հատված «Գնեկ և Տիրիթ» ասքապատումից.

«Երբ սարսափած Փառանձեմար սև Տիրիթի
լսեց լկտի այդ տառապամբ,
նա լուր կտրեց,
Ապա վշտով գայար ածեց իր իրանր» (ԳԴ, 272):

Ինքնին հասկանալի է, որ հեղինակը դարձվածք կիրառել է մեր նշած վերջին իմաստով: Իսկ այդ իմաստը այնքան տարողունակ է, ինչպես և մյուս բոլոր նշանակությունները:

Նույն կտրել բայական տարրով հեղինակը ունի ոսկի կտրել հարադրությունը՝ կիրառված իր՝ անդրանիկ հայերեն «Որերի պսակը» ժողովածուում: Սա վկայում է, որ արդեն իսկ վաղ շրջանում նրա մտածողությանը խորթ չէին հարադրավոր կաղմությունները, դրանց թվում՝ նաև դարձվածային, Համեմատներ.

«...նվ հայտնություն փողն հը փշում
Ոսկի կտրած դաշտերում» (ՈՊ, 45):

Բայական տարրը, ասվեց, նույնն է, բայց ամբողջ հարադրության իմաստը այլ է: Նշված բնագրում ոսկի կտրելը՝ նշանակում է ոչ միայն ոսկու գույն ստանալ, ոսկեգույն, դեղնել, սա ինքնին առկա է, այլև՝ ոսկու նման թանկ ու խաժնեավոր, ոսկու պես ազնիվ ու շնորհ լինել, ոսկու պես շուշուղիլ ու շլացնել: Ահա թե որքան իմաստային երանգներ է բնագրում դարձվածային բայական հարադրությունը: Բայց այդ բնագրում մեղ հետաքրքրում է նաև մեկ այլ լեզվական իրողություն: Այդ փոքրիկ հատվածում իրար կողք-կողքի կիրառված են արևելահայերեն և արևմտահայերեն բառաձևեր ու բերականական ձևեր: Դրանք հետագայում գրեթե հաղթահարվեցին: Սա լեզվական յուրօրինակ ու ինքնատիպ մի որակ է, որ բնորոշ է հեղինակի վաղ շրջանի ստեղծագործությանը:

Ահա մի քանի դարձվածային հարադրություններ՝

Պուղի մարդիկ ֆեդայու կնոջ
Նայում են խոր, գաղտնիք պղողղ նայվածքներով
Լի՛ք են անում մեկը մյուսին,
Հագում, թքում
նվ շիբուխից երկայն շնչով ծուխ քաշում (ՏՀ, 41):

Լի՛ք անել հարադրությունը (նաև՝ աչքով անել) ունի մի քանի դարձվածային իմաստ. մեկ (երբեմն՝ նաև երկու) աչքի լսելի շարժումով զարդանալ, մի քան ակնարկել, մի քան անելով նշան տալ, մի քան ասել, բայց աչքի շարժումով հսկայական հասկացվել և այլն:

Նույն ստեղծագործության մեջ՝

«Իր ուխտը զրթի հուշով իսկ աղոտ: Որպեսզի մոռնա,
Քթի տակ կամաց երգ է մոմում: Վերբը բացվում է...»
(ն. տ., 26):

Քթի տակ մոմում (առել, խոսել, երգել և այլն) — սա ևս դարձվածային հարադրություն է, որ նշանակում է՝ տխուր կամ ուրախ տրամադրությամբ հետ կապված՝ շատ ցածր ձայնով, ինքն իրեն համար, իրեն լսելի ձայնով մի քան ասել, երգել և այլն:

Այս և նման ձևերը ավելի քան պատկերավոր արտահայտություններ են, շրջաբանական ասություններ, որ այնքան բնորոշ են հայոց լեզվամտածողությանը և այդ մտածողության ակունքներից սնվող արվեստագետին:

Բայական հարադրությունների մի տարատեսակը, ինչպես ասացինք, զուգահեռական, զուգարակական հարադրություններ են¹³։ Այս խմբի բառերի առաջին և հիմնական առանձնահատկությունն այն է, որ «կազմվելով անկախ գործածություն ունեցող բայերից, ինչպես առնել-գնալ, բեռել-ծախել, գալ-անցնել...», մի այնպիսի նշանակություն են արտահայտում, որի սեռ բաղադրիչ մասերի նշանակությունները ոչ թե կորսվում են, այլ ի մի են դալիս ճշգրիտ իրար՝ ձևեր բերում մի ընդհանուր բովանդակություն¹⁴։ Այսպիսով՝ զուգարակական բայերը երկու, հազվադեպ՝ երկուսից ավելի բայերից կազմված բաղադրություններ են՝ հարադրություններ։

Մտածված այս կազմությունների ոճական արժեքին՝ հարկ է նշել, որ խոսքին հատուկ հնչեղություն ու շունչ են ներարկում մասնավորապես այն զուգարակական հարադրությունները, որոնց բաղադրիչները արտահայտում են սերժանտի կամ առնչակից իմաստներ։ Իրանով ոչ միայն զորացվում, սաստկացվում է բաղադրության արտահայտած իմաստը, այլև խոսքը ստանում է ժողովրդային երանգավորում, դառնում մեղեդային ու պատկերավոր։

«...Մեծ լեռների դադաթներից
Քշած-բեռած
Սեր լուսավոր կարկաչներում
Հույս են փնտրում» (ԾԾ, 10)։
«Հայնուս, պնդակազմ, հուժկու այդ մարդիկ,
Իրենց աշխարհի զովքը լսելով,
Կհենլ սկսեցին՝ կանչել-պուռալով» (ԳԴ, 15)։

Քշած-բեռած, կանչել-պուռալ զուգարակական բայերը գործառնված են դերբայական ձևերով։ Նման կազմությունները, անկասկած, ավելի մեծ հրնչություն ունեն դիմավոր կիրառությամբ։ Հմմտ. «Տոթահար քայլով՝ օր, օրի ետքից՝ ամառը դանդաղ անցնում է գնում» (ՏՀ, 18)։

Հաճախ լացերի հեղեղն է շառաչ,
Որ սրտակաուր, սուր վայումներով, ինչպես մղձավանջ,
Գալիս է ծածկում աղոթքս տխուր (ՈՊ, 51)։

Ահա մի պատկեր «Տատրագոմի հարսը» պոեմից։ Մականր կռվում է մենակ՝ ...կանգնում ուժասպառ ոտքերի վրա, քաջասրտորեն վայր նետվում անդունդ, իսկ թշնամիները՝

Հալթության ամոթը սեղմած գունատ երեսին,
Վերադառնում են քանդված գյուղերը և քաղկոտելով
Մական հերոսի խոշտանգված դիակը,
Տանում նետում են բաց հրապարակը (ՏՀ, 33)։

Եվ մեկ-երկու օրինակ՝

Ճակատագիրը իր անիվները տուճում-քրջում է
Կախարդված լուսնի շավիղի միջից (Ն. տ., 79)։
Սուրող քամու մետաղ փողը զրնգում էր
Բավալ գալիս բլրան կողին
Իվ իր գողը տանում-նետում ծառ ու բույսին (ԳԴ, 98)։
Սիրահարներ, սիրահարներ,
Եկե՛ք-տեսե՛ք՝
Ամեն կոհակ ունի գլխին մի ադամանդ (ԾԾ, 12) և այլն։

¹³ Ա. Աբրահամյան, Բայի ժամանակակից հայերենում, գիրք Ա, Ե., 1962, էջ 190։

¹⁴ Ա. Մարգարյան, Հայերենի հարադր. բայերը. Ե., 1966, էջ 296։

Կոստան Զարյանի լեզուն խորապես ժողովրդային է՝ համեմատած ազգային մտածողության կենդանի ավիշով։ Այն որքան ինքնատիպ է, նույնքան փեղկեղիկ, թովիչ ու բանաստեղծական։ Եվ որքան իրավացի էր Ավ. Ահարոնյանը, երբ Կոստան Զարյանի մասին գրում էր. «Երանի նրան, ով կարողանում է մեր խեղճությունը անհայտ ու դյուրիշ շողերով օծել և մեր մշտնջողատ ու մոլոր աչքերի առջև փռել սքանչացումի տեսիլքներ և հոգևորարար պատումներ։ Մեր այս դժխեմ ու նզովված օրերին, երբ զորշ ու զարշ իրականությունը լուսվելու ու լուսվում է այնքան զեղեցկություններ, Զարյանն իր կախարհիչ արվեստով գալիս է բարձրացնելու ու տարփողելու մեր դարավոր իդեալը...»¹⁵։

ՀԱՄԱՐԱՆՏԱԿՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳԴ — Կոստան Զարյան, Գիրք դյուցազնեղություն, Երևանում, 1978։

Ն — Կոստան Զարյան, Երկեր, Ե., 1985։

ՆՆ — Կոստան Զարյան, Երեւ Երգեր, Վիեննա, 1931։

ՏՀ — Կոստան Զարյան, Տատրագրների հարստ, Ե., 1965։

ՕՊ — Կոստան Զարյան, Օրերի պսակը, Կ. Պոլիս, 1922։

СПЕЦИФИКА ЯЗЫКА КОСТАНА ЗАРЬЯНА

С. С. ГАСПАРЯН

Р е з ю м е

Являясь восточноармянским писателем, Костан Зарьян почти всю свою творческую жизнь провел на западе, но по сути сохранил восточноармянский образ мыслей.

В течение всей своей творческой жизни он сохранил любовь и интерес к пародному языку и народной тематике, к живой речи, яркому образному мышлению, которое не могло не оставить заметного следа в его литературном наследии.

Лексика писателя богата и многогранна: она насыщена народными изречениями, параллелизмами, сочетаниями и оборотами, крылатыми выражениями.

¹⁵ Ա. Ահարոնյան, Կոստան Զարյան (Հայրենիք, 1930, № 6, էջ 59)։